

<https://doi.org/10.59982/18294359-25.1-ig-05>

Նաիրա Իշխանի Գրիգորյան

դոկտ.թ.

ՀԵՀ, Կառավարման ամբիոն

grigoryan.n2023@gmail.com

Ամփոփագիր

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգում կրթական տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը դարձել է առաջնահերթություն՝ առաջացնելով ինչպես մեծ հնարավորություններ, այնպես էլ նշանակալի մարտահրավերներ:

Հոդվածը նվիրված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացում նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման հրատապությանը և ապագայում դասական կրթության պահանջարկի հիմնահարցերին: Կրթության ոլորտում նորարարական մոտեցումների մշակումը թելադրվում է արդի պահանջներով, աջակցվում պետական մակարդակով և աշխատաշուկայի կարիքներով:

Ներկայում չկան այն հարցի պատասխանները, թե ինչպիսին պետք է լինի կրթությունը, որպեսզի ապահովի ապագայի կարիքները բավարարելու պահանջները: Բազմաթիվ համալսարաններ վերափոխում են ուսուցման կառուցվածքը և ուսումնական գործընթացի կազմակերպումը: Այնուամենայնիվ, տեխնոլոգիաների և ուսուցման ձևերի ճիշտ ընտրության և համադրության հարցը մնում է արդիական:

Ուսումնական գործընթացում կիրառվող գործնական ուղղվածությունը, անհատական մոտեցումը, շարունականությունը, թվայնացումը, առցանց կրթության, միջառարկայական կապերի ապահովումը կամ այս բոլոր ձևերի և տեխնոլոգիաների համակցումը կարևոր պայման է փոփոխվող աշխատաշուկայի ճանապարհին կրթական ծառայությունների առաջարկների ձևավորման համար:

Բարձրագույն կրթության ոլորտում կրթական տեխնոլոգիաների զարգացման գլխավոր խնդիրներից են ֆինանսական սահմանափակումները, որոնք խոչընդոտում են անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորմանը: Մասնագիտական զարգացման և վերապատրաստման անբավարարությունը հանգեցնում է դասախոսական կազմի թվային հմտությունների պակասի: Հաճախ նկատելի է նաև դիմադրություն նորարարություններին և հին պահպանողական մեթոդներին կառչելը:

Արդիական խնդիր է նաև թվային անհավասարությունը՝ ուսանողների միջև թվային գործիքների հասանելիության և հմտությունների տարբերությունը: Տեխնիկական որակի, կիբեռանվտանգության և տվյալների գաղտնիության

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ապահովումը ևս մնում է մարտահրավեր: Սակայն ներկայումս նկատվում են հետևյալ հիմնական միտումներ՝ հիբրիդային և խառը ուսուցման մորեների տարածում, արեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքների կիրառում անհատականացված կրթական փորձառության համար, վիրտուալ և լրացված իրականության տեխնոլոգիաների աճող դերը գործնական ուսուցման մեջ: Հետևաբար, այս փոփոխությունների արդյունավետ կառավարումը որոշիչ դեր կունենա բարձրագույն կրթության ապագայի համար:

Հիմնաբառեր. Կրթական գործընթացի բարեփոխում, գիտելիքի փոխանցման ձևաչափ, նախագծային մոտեցում, կրթական ծրագրեր:

Ներածություն

Հետազոտության նպատակն է՝ բարձրագույն կրթության ոլորտում ներդնել նոր կրթական տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն աշխատաշուկայի կողմից ներկայացվող համապատասխան հմտությունների և կարողությունների զարգացմանը: Հետևաբար, գլոբալ թվայնացման և տեխնոլոգիական առաջընթացի դարաշրջանում բարձրագույն ուսումնական հաստատությունները ստիպված են վերանայել իրենց դասավանդման և ուսուցման մեթոդաբանությունը՝ համապատասխանեցնելով դրանք 21-րդ դարի պահանջներին: Հասարակության արդի զարգացումները, թելադրում են ուսանողակենտրոն կրթական հայեցակարգի իրագործման անհրաժեշտություն, որի վերջնական նպատակն է՝ մեծացնել ուսանողի դերը ուսուցման գործընթացում [Fuller, S. 2003, P. 41–76]:

Ուսանողակենտրոն հայեցակարգի համաձայն՝ ուսումնառության գործընթացը ենթադրում է ոչ միայն գիտելիքի փոխանցում, յուրացում և վերարտադրություն, այլև գիտելիքի ձևավորում և մարմնավորում:

Բարձրագույն կրթության առջև ծառացած մարտահրավերները ուսումնասիրվել են բազմաթիվ հետազոտություններում և հաստատվել մի շարք հեղինակների կողմից (Յու. Լ. Սարգսյան, Զ. Վիզեմա, Մ. Կարնոյ, Ա. Ավրուս, Մ. Բարբեր, Ա. Վոլկով, Ա. Դելբանկո, Կ. Դոնելի, Ի. Իյինսկայա, Գ. Իցկովիցա, Ս. Կոլինի, Ս. Ֆուլեր, Պ. Շեղրովիցկի և այլոք):


Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակմանը, որոնց թվում է համագործակցային ուսուցումը [Ильинская, 159]: Ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքներով՝ պայմանավորված՝ ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացքում ստեղծվում են սովորողների համագործակցային խմբեր, որոնք նպաստում են մտավոր, զգայական, ուսումնական խնդիրների լուծմանը, համագործակցային, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և սոցիալականացմանը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների համագործակցության մոդելը:

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներկայիս երիտասարդ շրջանավարտները, տեսական մասնագիտական գիտելիքներից զատ, պետք է ծեղոք բերեն հետազոտական և գործնական հմտություններ, լինեն նոր գաղափարներ առաջարողողներ և թիմակիցների գաղափարները զարգացնողներ, լինեն նախաձեռնող, գրագետ, տիրապետեն աշխատանքային բարեվարդության կանոններին, ունենան թիմում աշխատելու կարողություններ. քննադատական, վերլուծական, հետազոտական և ստեղծագործական մտածողություն:

Գծապատկեր 1.




Բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների համագործակցային մոդելը
[Կլարկ, 120]

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Այս ամենը նոր լուծումներ է պահանջում մասնագիտական կրթության կազմակերպման ոլորտում՝ համապատասխան հմտությունների և կարողությունների զարգացմամբ:

Մինչ այժմ համալսարանների կառավարման մեթոդները բնութագրվում էին նորմատիվային մոտեցումներով, առանց այլընտրանքային տարբերակների, ինչը նոր պայմաններում հանգեցրել է նախկինում օգտագործվող կազմակերպչական ձևերի մեխանիկական փոխանցմանը: Հետևաբար, ուսումնական գործընթացի բարեփոխումն անհնար է առանց կազմակերպության նախագծային կառավարման կառուցվածքի փոխակերպման մոտեցումների ներդրման: Գծապատկեր 2-ում ներկայացված է համալսարանների կառավարման գործընթացի կառուցվածքային մոդելը:

Գծապատկեր 2.



Բուհի կառավարման ընդհանուր կառուցվածքային մոդելը [Կոլլուս, 150]

Հետևաբար, անընդհատ զարգացող համաշխարհային շուկայական տնտեսության պայմաններում շարունակաբար իրենց մրցակցային առավելություններն են հաստատում իին ու նոր կրթական հաստատությունները:

Ժամանակակից կրթության ոլորտը պահանջում է տեխնիկական միջոցների և բարձր տեխնոլոգիաների համակողմանի ներթափանցում [Կարաչուրինա, Շայխուդինովա, 54]: Հետևաբար, այդ գործընթացը մի կողմից ուղղված է սովորողներին անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով զինելուն, մյուս կողմից՝ կրթական գործընթացի համապատասխանեցումը արդի պահանջներին և ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Վերջին հաշվով՝ վերափոխվում են ոչ միայն ուսուցման գործընթացի կառավարման բոլոր գործառությունները՝ դասընթացը պլանավորելու, լսարանում ճիշտ կազմակերպելու, ուսուցման նոր ձևեր և ոճեր ընտրելու, ուսանողներին մոտիվացնելու և վերահսկելու, նոր մեթոդաբանությամբ առաջարրանքներ կազմելու և հանձնարարելու,

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

իրականացնելու և ներկայացնելու, այլև փոփոխվում է բարձրագույն ուսումնական հաստատության դերն ամբողջությամբ: Որպես այս ամենի հետևանք՝ դասախոսությանող փոխհարաբերություններն ընդունում են որակապես նոր ձևեր, բովանդակային նոր դրսնորումներ՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանը [Բարբեր, Դոնհելլի և ճր.104]:

Անշուշտ, նոր որակի կրթություն ապահովելու համար ուսումնական հաստատությունները ստիպված են լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել՝ որակապես նոր ենթակառուցվածքներ ստեղծելու համար:

Կարևոր ենք համարում բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման ավանդական (*Waterfall*) դասական մոդելից անցում կատարել ճկուն (*Scrum*) կառավարման մոդելին, որը կապահովի կրթության կառավարման բարձ որակ: Հետևաբար, ներկայացնենք նախագծային մուտեցումը կրթական գործընթացում ներդնելու կարևորության մասին՝ հաշվի առնելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» << օրենքում նորմատիվային որոշակի պահանջները և ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների և նոր ձևերի հնարավորությունների օգտագործումը [<< Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենք].

- Կոմպետենցիաներով ձևավորված համակողմանի մոդեցումն ըստ ուսուցման մակարդակների;

- կողմնորոշում դեպի նախագծային ուսուցում, ինչը հնարավոր է դարձնում անձի կարիքների վեր հանումը;

- կենսորունանալ թվային գործություններում գործեկարգվական և հաղորդակցական գործությունների կոմպետենցիաների վրա՝ հիմնված գովազների և մրավոր սեփականության պաշտպանությամբ;

- կրթական գործունեության որակի գնահավման նոր մոդեցումները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ներկայում հստակեցված չէ << օրինակելի հիմնական կրթական ծրագրերի դերը վերապատրաստման (մասնագիտությունների) համապատասխան ոլորտներում, որոնք պետք է կարգավորեն կրթական ծրագրերի կառուցվածքը:

Կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել կրթական հաստատությունների ոիսկերին.

- ✓ դասախոսների ծանրաբեռնվածության անհավասար բաշխում;
- ✓ ուսումնական գործընթացում ծախսերի ավելացում;
- ✓ կազմակերպչական դժվարություններն ուսուցման ընթացքում;
- ✓ չնախատեսված ծախսեր՝ գործընկեր կազմակերպության կողմից կատարվող պարտականություններից հրաժարվելու դեպքերը;
- ✓ մատուցվող ծառայությունների որակի նվազում (այդ թվում՝ հաստատված ուսումնական ծրագրերից շեղվելու դեպքերը):

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայտնաբերված ոիսկերը սկզբնական մակարդակում պետք է վերլուծվեն և նվազագույնի հասցեն բարձրագույն ուսումնական հաստատությանը համապատասխան ճկուն կառավարման համակարգի միջոցով, որտեղ սովորողների անհատական կրթական հետագծերի զարգացման արդյունքները կլինեն.

- գործատուների առաջարկները;
- շրջանավարտներին գնահատելը գործատուների կողմից;
- գիտելիքների բանկի ստեղծումն ըստ տարբեր ոլորտների;
- կարծիքների և գնահատականների հավաքագրում՝ այլ ուսանողների կրթությունն առավել բարձր որակով կազմակերպելու համար նախ պետք է
- ապահովել ուսանողների հմտությունների վերաբերյալ տարբեր ընկերությունների հետադարձ կապը,
- ստեղծել անձնական թվային պրոֆիլներ:

Հետևաբար, բարձրագույն կրթության ոլորտում կրթական տեխնոլոգիաների զարգացումը կնպաստի.

➤ գիտելիքների փոխանցման նոր ձևաչափերի ներդրմամբ կրթական ծրագրերի ձևավորում և իրականացում համաձայն <<գիտական և տեխնոլոգիական զարգացման ռազմավարության առաջնահերթությունների>>;

➤ համալսարաններում համախմբված կենտրոնների ձևավորում, որոնք կապահովեն գիտելիքի «կյանքի ցիկլ» բոլոր փուլերի աջակցության հավասարակշուրջ համակարգ;

➤ միասնական կանոնների սահմանում բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝ անկախ գտնվելու վայրից և կարգավիճակից;

➤ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների անհատական զարգացման հետագծերի ներդնում;

➤ կոմպետենցիաների անհատական պրոֆիլի ձևավորում, անհատական զարգացման հետագծի և քաղաքացիների շարունակական կրթության ապահովում՝ օգտագործելով թվային ծառայությունները:

Եղակացություն

Բարձրագույն կրթության ոլորտում կրթական տեխնոլոգիաների զարգացումը բերում է լուրջ փոփոխություններ ուսուցման բնույթի և կազմակերպման մեջ: Չնայած առկա մարտահրավերներին, տեխնոլոգիաները բացում են նոր հնարավորություններ կրթության որակի բարձրացման, հասանելիության ընդլայնման և դասավանդման գործնթացի արդիականացման համար: Այս փոփոխությունների արդյունավետ կառավարումը որոշիչ դեր ունի բարձրագույն կրթության ապագայի համար:

Թվայնացումը և մատչելի հարթակները նպաստում են կրթության հասանելիության ընդլայնմանը: Մասնագիտական առցանց համայնքների զարգացումն ու հետազոտական գործիքների հասանելիությունը բարելավում են համագործակցությունը: Բլոկեյն տեխնոլոգիաները սկսել են կիրառվել դիպումների

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

հավաստագրման ոլորտում, իսկ «մեծ տվյալների» վերլուծությունը թույլ է տալիս բարելավել ուսումնական գործընթացի արդյունավետությունը՝ հիմնվելով վարքային տվյալների վրա:

Այսպիսով, ժամանակակից կրթությունը դառնում է հասանելի ցանկացած տեսակի կրթություն նախընտրող մարդու համար՝ անկախ տարիքից, սոցիալական վիճակից և այլ պայմանականություններից: Հաջողություն արձանագրող երկրներում կրթական հաստատությունները շարունակաբար բարելավում են իրենց կրթական ծրագրերը, հարմարեցնում դրանք սովորողների տարբեր պահանջներին: ՀՀ ուսանողներն այսօր կրթվելու, մասնագիտանալու այլընտրանքային ուղիներ են փնտրում: Սովորել ցանկացողների մի մասը դասական տեսական կրթությունը փոխարինում է մասնագիտություն ձեռքբերելու արագ ճանապարհով: Նրանք ցանկանում են խնայել ժամանակը, ուսուլաները և սովորել ավելի ճկուն կրթական մոդելում՝ համատեղելով աշխատանքը կրթության հետ:

Գրականության ցանկ

1. << օրենքը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» e-draft.am, (4 դեկտեմբերի, 2024):
2. Барбер М., Доннелли К., Ризви С. Накануне схода лавины. Высшее образование и грядущая революция. – М., 2013, 73 с.
3. Ильинская И. ДНК инновационного развития // Вопросы образования. – 2013. – № 3. – С. 152-161.
4. Каракурина Р.Ф., Шайхутдинова Г.Ф. Становление опорного вуза в контексте задач социально-экономического региона // Высшее образование сегодня. – 2018. – № 4. – С. 53-57.
5. Кларк Б.Р. Создание предпринимательских университетов: организационные направления трансформации / пер. с англ. А. Смирнова; Гос. ун-т – Высшая школа экономики. – М., 2020. – 240 с.
6. Коллинз С. Зачем нужны университеты? / пер. с англ. Д. Кралечкина. – Высшая школа экономики. – М., 2022. – 264 с.
7. Fuller, S. (2003). «In Search of Vehicles for Knowledge Governance: On the Need for Institutions that Creatively Destroy Social Capital». In N. Stehr, ed. The Governance of Knowledge (New Brunswick NJ: Transaction Books). P. 41–76.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՂԱՎԱՐՈՒՄ
**PROBLEMS AND TRENDS IN THE DEVELOPMENT OF EDUCATIONAL
TECHNOLOGIES IN HIGHER EDUCATION**

Naira Grigoryan
PhD in Economics
EUA, Chair of Management
grigoryan.n2023@gmail.com

Abstract

In the modern higher education system, the implementation and development of educational technologies has become a priority, generating both great opportunities and significant challenges.

This article addresses the urgency of implementing new educational technologies in the learning process of higher education institutions and the issues of future demand for classical education. The development of innovative approaches in education is dictated by current requirements, supported at the state level and by labor market needs.

Currently, there are no clear answers to the question of what education should be like to meet the requirements of future needs. Many universities are transforming the structure of teaching and the organization of the educational process. However, the question of the right choice and combination of technologies and forms of learning remains relevant.

Practical orientation, an individualized approach, continuity, digitalization, online education, and ensuring interdisciplinary connections - or a combination of all these forms and technologies applied in the educational process are important conditions for the formation of educational service offerings in response to the changing labor market.

Among the main issues in the development of educational technologies in higher education are financial constraints that hinder the formation of necessary infrastructure. Insufficient professional development and training leads to a lack of digital skills among faculty. Resistance to innovation and adherence to old conservative methods is also often noticeable.

Digital inequality remains a pressing issue - the difference in access to digital tools and skills among students. Ensuring technical quality, cybersecurity, and data privacy also remains a challenge. However, several main trends are currently observed: the spread of hybrid and blended learning models, the use of artificial intelligence and machine learning tools for personalized educational experiences, and the growing role of virtual and augmented reality technologies in practical training. Therefore, effective management of these changes will play a decisive role in the future of higher education.

Keywords: Small and medium enterprises, SME activity analysis, study of economic operators' issues, identification of new opportunities for SMEs.

Ներկայացվել է՝ 03.04.2025թ.
Ուղարկվել է գործուսման՝ 22.04.2025թ.